ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1958 Общественные науки

Գ. Խաչատրյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ազատության ու անկախության, ազգային կուլտուրայի պահպանության ու զարգացման համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարը, շնորհիվ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի, 1920 թ. նոյեմբերին պսակվեց պատմական հաղթանակով։

Սովետական իշխանության հաստատումով սկսվեց հայ ժողովրդի նոր, լուսավոր պատմության դարագլուխը։

Բանվորների ու գյուղացիների Սովետական պետության առջև խնդիր ծառացավ սոցիալիստական հասարակության կառուցումը, այսինքն՝ կապիտալիստական տնտեսաձևի լիկվիդացումը և սոցիալիզմի հիմքերի վրա երկրի էկոնոմիկայի արմատական վերակառուցումը, հզոր ինդուստրիայի ստեղծումը, մանր, անհատական գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, նոր կուլտուրայի ստեղծումը։

Սոցիալիզմի կառուցումը մեր երկրում նշանակում էր ոչ միայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգի արմատական փոփոխություն, այլև կուլտուրական ռևոլյուցիայի միջոցով սովետական ժողովրդի բարոյական ու հոգևոր կերպարի վերափոխում։

Լենինը մատնանշում էր, որ ամենալայն մասսաներին գիտությանը, տեխնիկային, կուլտուրային, պետության կառավարմանը հաղորդակից դարձնելը սոցիալիզմի կառուցման պարտադիր պայմանն է։ Նա հիմնավորեց կուլտուրական ռևոլյուցիայի իրականացման անհրաժեշտությունը։ Այդ ռևոլյուցիան Մեծ Հոկտեմբերի անհրաժեշտ և օրինաչափ արդյունքն էր։

Վերածնված Հայաստանի բանվորների և գյուղացիների համար կուլտուրական այդ ռևոլյուցիայի կենսագործումը ներկայացնում էր առավել մեծ դժվարություն, որովհետև Հայաստանը տնտեսապես հիմնավորապես ավերված էր։ Ողորմելի էր լուսավորության վիճակը։ Խիստ պակասում էին կադրերը։

Չնայած ռեսպուբլիկայում տիրող տնտեսական ու պարենային ծանր ճգնաժամին, սովին ու համաճարակներին Կոմունիստական պարտիան առաջին լուրջ քայլերը կատարեց կուլտուրական աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ։ Գործողության ուղեցույց ունենալով Սովետական Ռուսաստանի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական շինարարության քառամյա փորձը, կուլտուրական ռևոլյուցիայի մասին Լենինի իմաստուն ցուցումները, Հայաստանի Սովետական կառավարությունը անհապաղ ձեռնամուխ եղավ ռեսպուբլիկայի կուլտուրական կյանքը կազմակերպելու և ծավալելու աշխատանքին։

Կուլտուրական շինարարության արմատական վերակառուցումը դարձավ կենսական անհրաժեշտություն։ Այդ նպատակով Հայկական ՍՍՌ-ի կառավարությունը հրատարակեց մի շարք դեկրետներ՝ ժողովրդական լուսավորության ծավալման, անգրագիտության վերացման, գեղարվեստական և հնագիտական

հուշարձանների պահպանության, մամուլի և կուլտուրական կյանքի մյուս հարցերի վերաբերյալ։

Այդ դեկրետներով Հայաստանի տերիտորիայում գործող բոլոր տիպի դպրոցները, հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները, թանգարանները, տպարանները, բոլոր պատմական հնություններն ու կուլտուրական արժեքները ազգայնացվեցին և հռչակվեցին համաժողովրդական սեփականություն[1]։

Սովետական իշխանությունը նոր հիմքերի վրա դրեց ժողովրդական լուսավորության գործը։ Նա արմատապես փոխեց լուսավորության գաղափարական ու կազմակերպչական կառուցվածքը։ Անհրաժեշտ էր կրթության աշխարհականացում, ամբողջ կուլտուրական կյանքի կազմակերպումն ու ղեկավարումը պետական-սոցիալիստական հիմունքներով։ Ժողովրդական կրթության գործը կենտրոնացավ պետության ձեռքում։ Ստեղծվեց Հայկական ՍՍՌ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ։

Կառավարության որոշմամբ դպրոցներում դասավանդումը տարվում էր մայրենի լեզվով։ Սահմանվեց ձրի ուսուցում, վերացվեց դպրոցների բազմատիպությունը, ստեղծվեց դպրոցական միասնական սիստեմ՝ առանց ազգային-ռասայական սահմանափակումների, ուսման բնագավառում հռչակվեց տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը։

Պարտիայի ու կառավարության միջոցառումները կուլտուրական շինարարության և հատկապես ժողովրդական լուսավորության բնագավառում տվեցին իրենց հիանալի պտուղները։ 1914/15 ուսումնական տարում Հայաստանի տերիտորիայում ընդամենը կար 459 դպրոց, որոնցում սովորում էին 34738 աշակերտ, առավելապես ունևոր խավերի երեխաներ։ Բոլոր դպրոցներում աշխատում էին 1146 ուսուցիչ։ 1918—1920 թթ. դաշնակների տխրահռչակ տիրապետության ժամանակ դպրոցների ընդհանուր թիվը իջավ 159-ի։ Պատկերը արմատապես փոխվեց Հայաստանում սովետական կարգերի հաղթանակով։ Արդեն 1921/22 ուսումնական տարում, այսինքն Սովետների իշխանության ընդամենը մեկ տարվա գոյության ընթացքում մասսայական դպրոցների թիվը ռեսպուբլիկայում հասավ 506-ի՝ 47462 աշակերտով, իսկ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերջում դպրոցների թիվը հասավ 758-ի, որտեղ սովորում էին 76989 աշակերտ։

Ռեսպուբլիկայում բուռն թափ ստացավ դպրոցաշինարարությունը։ Բավական է ասել, որ 1924/25 ուսումնական տարվա նախօրյակին վերանորոգվեց 276 և կառուցվեց նոր 94 դպրոց։ Միաժամանակ դպրոցները ապահովվեցին անհրաժեշտ կահույքով և ուսումնա-դաստիարակչական ձեռնարկներով։ Սակայն ժողովրդական կրթության վիճակը դեռևս չէր բավարարում ժողովրդական մասսաների աճող կարիքները։ Խնդիրն այն էր, որ 1924/25 ուսումնական տարում Հայաստանում եղած 131616 երեխաներից դպրոց հաճախում էին 59354 հոգի. դպրոցահասակ երեխաների 55 տոկոսը դեռևս դուրս էր մնում դպրոցական ցանցից։ Հայկական ՍՍՌ-ի Լուսժողկոմատը մշակեց ընդհանուր 10-ամյա ուսուցման հեռանկարային պլան, որի իրագործումն ապահովեց ռեսպուբլիկայի բոլոր դպրոցահասակ երեխաների պարտադիր ուսուցումը[2]։

[1] Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, Էջմիածին, 1921։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. № 113, գ. 84, թերթեր 59, 64։

* * *

Կուլտուրական շինարարության ճակատում պարտիայի առջև ծառացած ամենահրատապ և առաջնահերթ խնդիրը բնակչության ընդհանուր գրագիտության հարցն էր։ Անհրաժեշտ էր լիկվիդացնել բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանի ամոթալի և ծանր ժառանգությունը՝ բնակչության մասսայական անգրագիտությունը և հասնել համընդհանուր գրագիտության։

Նախառևոլյուցիոն Ռուսաստանում 9 տարեկանից բարձր բնակչության 76 տոկոսը անգրագետ էր։ Անդրագիտության տոկոսը առավել ևս բարձր էր ազգային ծայրամասերում։ Միջին Ասիայի, Հյուսիսային Կովկասի, ծայր Հյուսիսի, Արևելքի բազմաթիվ ազգություններ և էտնիկական խմբեր բոլորովին զուրկ էին լուսավորությունից և իրենց ճնշող մեծամասնությամբ անգրագետ էին։ Ցարական Ռուսաստանի 40 ազգություններ բոլորովին չունեին իրենց գիրն ու գրականությունը։ Լուսավորության ու կրթության մակարդակով Հայաստանը քիչ բանով էր տարբերվում Ռուսաստանի մյուս ծայրամասերից։ Բնակչության ավելի քան 80 տոկոսը անգրագետ էր։

Քաղաքացիական կռվի ամենաթեժ պահին՝ 1919 թ. դեկտեմբերի 26-ին Վ. Ի. Լենինը ստորագրեց «ՌՍՖՍՌ-ի բնակչության մեջ անգրագիտության վերացման մասին» հռչակավոր դեկրետը։ Պատմական այդ փաստաթուղթը հանդիսացավ կուլտուրական շինարարության մանիֆեստ մեր երկրում։

Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը լենինյան այդ դեկրետի հիման վրա ձեռնարկեց անգրագիտության, խավարի ու հետամնացության վերացման գործը։

1921 թ. սեպտեմբերի 21-ին ՀՍՍՌ-ի ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվեց Հայաստանի կառավարության դեկրետը, որի համաձայն 16—50 տարեկան բոլոր քաղաքացիները, ներառյալ կարմիրբանակայինները, պարտավոր էին գրագիտություն սովորել։ Այդ նպատակով ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում ստեղծվեցին հատուկ դրպրոցներ՝ անգրագիտության լիկվիդացիայի կայաններ՝ լիկկայաններ, գրագիտության խմբակներ, երեկոյան դպրոցներ, խրճիթ ընթերցարաններ և այլն։ Այդ նպատակին տրամադրվեցին խոշոր միջոցներ։ Անգրագիտության վերացումը դարձավ սովետական ամբողջ հասարակայնության հարվածային խնդիրը։

Անգրագիտության վերացման աշխատանքը գլխավորելու և կազմակերպված հունի մեջ դնելու նպատակով Ռեսպուբլիկայում ստեղծվեց «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը, որը գավառներում ուներ իր բաժանմունքները։

Թե ինչպիսի թափ ընդունեց անգրագիտության վերացման գործը երևում է նրանից, որ դեկրետն ընդունելուց 4 տարի հետո՝ 1925/26 ուսումնական տարում Հայկական ՍՍՌ-ում գործում էին 535 լիկկայան, 46 կիսագրագիտական դպրոց և 4 երեկոյան դպրոց, որոնցում սովորում էին 19714 մարդ[1]։ Անգրագիտության վերացման խնդիրը ավելի մեծ թափ ընդունեց առաջին հնգամյակի տարիներին, երբ մտցվեց ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում։ Հնգամյակի վերջին գրագիտություն սովորեցին ավելի քան 500.000

[1] «Խորհրդային Հայաստան», 1921—1925, ժողովածու, էջ 309։

մարդ, այսինքն Սովետական Հայաստանի բնակչության 60 տոկոսից ավելին։ 1940—41 թթ. Հայաստանը դարձավ համատարած գրագիտության երկիր։

* * *

Կուլտուրան, ժողովրդական կրթությունը շարունակ աճում էին սոցիալիստական շինարարության հաջողություններին զուգընթաց։ Երկրի ինդուստրացման և կոլեկտիվացման պարտիայի քաղաքականության հաջող կենսագործումը ռեալ պայմաններ ստեղծեց ժողովրդական կրթության բնագավառում անցնելու մի նոր աստիճանի՝ ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման իրականացմանը։

Ի պարգացումն XVI համագումարի դիրեկտիվների, ՀամԿ(բ)Պ Կենտկոմը 1930 թ. հուլիսի 25-ին որոշում ընդունեց ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու մասին։ Դրանից անմիջապես հետո Սովետական կառավարությունն ընդունեց «Ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման մասին» որոշումը։ Այդ հիման վրա ՀԿՊ Կենտկոմը 1930 թ. օգոստոսի 7-ին և Հայաստանի Կենտգործկոմն ու Ժողկոմսովետը 1930 թ. հոկտեմբերի 5-ին և 1931 թ. հունվարի 6-ին որոշումներ հրապարակեցին պարտուսին անցնելու մասին։

Համաձայն այդ որոշումների, 1930—31 թվականից Հայկական ՍՍՌ-ում մտցվում է պարտադիր տարրական ուսուցում։ Քաղաքներում, բանվաններում և սովխոզներում պարտուսը պետք է իրագործվեր յոթնամյակի ծավալով։ Պարտիան և կառավարությունը նշեցին կոնկրետ միջոցառումներ պարտուսի ֆինանսավորման, դպրոցաշինարարության, մանկավարժական կադրերի պատրաստման և այլ հարցերի ուղղությամբ։

Ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունները կազմակերպեցին և գլխավորեցին համաժողովրդական այդ պատմական գործը։ Պայքարելով պարտիայի XVI համագումարի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի, Հայաստանի Կոմունիստական պարտիայի ու կառավարության որոշումների կատարման համար, պարտիական կազմակերպությունները քաջալերեցին և ոտքի բարձրացրին աշխատավոր լայն մասսաներին, ղեկավարեցին նրանց նախաձեռնությունը և ինքնագործունեությունը, պարտուսի կիրառման գործը վերածեցին իրոք մասսայական, հասարակական-քաղաքական կամպանիայի։ Պարտուսի համար մղվող պայքարին ակտիվորեն լծվեցին պրոֆմիութենական, կոմերիտական և հասարակական-մասսայական մյուս կազմակերպությունները, ողջ Սովետական հասարակությունը։ Հայաստանում ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման կենսագործումը տվեց իր հիասքանչ պտուղները։ 1932/33 ուսումնական տարում ռեսպուբլիկայում դպրոցների թիվը հասավ 1099-ի 179150 սովորողով, 1928/29 ուսումնական տարում եղած 846 դպրոցի և 86225 սովորողի փոխարեն։ Հայաստանի Կ(բ)Պ VIII համագումարը (1932) արձանագրեց, որ պարտուսը ռեսպուբլիկայում հիմնականում իրագործվել է։

Սակայն կուլտուրական ռևոլյուցիայի խնդիրը չէր սահմանափակվում անգրագիտության վերացման և ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման պրոբլեմի լուծմամբ։ Նա միաժամանակ ենթադրում էր աշխատավոր լայն մասսաների կուլտուրականության հզոր վերելք, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար բազմակողմանի կրթված կադրերի դաստիարակում։

«Բավական չէ անդրագիտությունը վերացնել,— գրել է Լենինը 1921 թ.,— պետք է նաև սովետական տնտեսություն կառուցել, իսկ այս դեպքում մենակ դրագիտությամբ չի կարելի շատ բան անել։ Մեզ հարկավոր է, որ կուլտուրան վիթխարի չափով բարձրանա»[1]։

Անհրաժեշտ էր անդրագիտության լիկվիդացումից և տարրական կրթության իրագործումից անցնել ժողովրդական կրթության ավելի բարձր աստիճանին՝ ընդհանուր յոթնամյա և միջնակարգ ուսուցման իրականացմանը։

ՀամԿ(բ)Պ XVII համագումարը որոշեց երկրորդ հնգամյակում ավարտել ոչ միայն անդրագիտության վերացումը և ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման իրականացումը, այլև «իրագործել ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկական ուսուցումը յոթնամյակի ծավալով, առաջին հերթին գյուղում, քանի որ քաղաքում այդ խնդիրը առաջին հնգամյակի ընթացքում հիմնականում արդեն լուծված էր» («ՍՄԿՊ-ն բանաձևերում», մաս 3, էջ 272—273)։

Սոցիալիստական շինարարության հաջորդ տարիներին ՍՍՌՄ-ում տեղի ունեցավ իսկական կուլտուրական ռևոլյուցիա, որի վառ ցուցանիշը ժողովրդական կրթության ներկա վիճակն է։ Կապիտալիստական ոչ մի երկիր չունի այնպիսի քանակությամբ դպրոցներ, տեխնիկումներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես Սովետական Միությունը։ Քաղաքներում ու գյուղերում մտցված է ընդհանուր յոթնամյա կրթություն և ՍՄԿՊ XX համագումարի որոշմամբ այժմ իրականացվում է այնպիսի մեծագույն պատմական խնդիր, ինչպիսին է ընդհանուր միջնակարգ կրթությունը։ Ներկայումս ՍՍՌՄ-ում սովորողների թիվը, ներառյալ մասնագիտական դպրոցները, կազմում է 50 միլիոն մարդ. բարձրագույն ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում սովորում է ավելի քան 4 միլիոն մարդ՝ 1913 թ. 182 հազարի փոխարեն։

Ժողովրդական կրթության բնագավառում բացառիկ վիթխարի թռիչք կատարեց և Սովետական Հայաստանը։ Ներկայումս Հայկական ՍՍՌ-ում գործող 1197 հանրակրթական դպրոցներում, 57 ուսումնարաններում և տեխնիկումներում սովորում են մոտ 300 հազար հոգի։ Սա մեծագույն թռիչք է ժողովրդական կրթության բնագավառում, թռիչք, որը բնորոշում է սովետական կուլտուրայի ու կրթության անսահման դեմոկրատիզմը, նրա ժողովրդական բովանդակությունը։ Բացի հայերեն լեզվով դպրոցներից ռեսպուբլիկայում գործում են ռուսերեն, ադրբեջաներեն, քրդերեն լեզուներով ուսուցման դպրոցներ։

Ժողովրդական կրթության վերաբերյալ վերը բերված փաստական ցուցանիշները այն ուղենիշներն են, որով անցել է Հայաստանը՝ ցարական Ռուսաստանի հետամնաց տնտեսական կցորդից հասնելով ժամանակակից ինդուստրիալ, քաղաքակիրթ, համատարած գրագիտության ռեսպուբլիկայի մակարդակին։

* * *

Սովետական ամենադեմոկրատական կարգի վիթխարի նվաճումներից մեկը հանդիսանում է մասնագիտական և բարձրագույն կրթության բուռն զարգացումը, իսկական ժողովրդական ինտելիգենցիայի ստեղծումը։

Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, որ իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգը չի կարող դառնալ երկրի իսկական լիարժեք տերը, չա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 88։

պահովելով իր ղեկավարությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում։ Բանվոր դասակարգը չի կարող իր իշխանությունն ամրապնդել և նոր կյանք կառուցել, եթե չստեղծի սեփական ինտելիգենցիա, չտիրապետի գիտության հիմունքներին և չսովորի տնտեսությունը կառավարել գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա։

Սովետական իշխանության թշնամիները, այդ թվում Երկրորդ Ինտերնացիոնալի ծախու լիդերները, մենշևիկները, աջ սոցիալ-դեմոկրատները, հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ դաշնակները միաբերան պնդում էին, թե Ռուսաստանը դեռ չի հասել արտադրողական ուժերի զարգացման այնպիսի մակարդակի, որի պայմաններում հնարավոր լինի սոցիալիզմի կառուցման ձեռնարկումը, թե սոցիալիզմի համար երկրում չկան բավականաչափ կուլտուրական նախադրյալներ։ Նրանք գտնում էին, որ Ռուսաստանի նման տնտեսապես և կուլտուրապես հետամնաց երկրում, ուր իշխում էր մանրբուրժուական տընտեսաձևը, սոցիալիզմը անխուսափելի ձախողման է դատապարտված։ Թշնամիները առավել ևս համոզված էին, որ նման պայմաններում ՍՍՌՄ-ն չի կարող սեփական ուժերով լուծել գիտա-տեխնիկական և վարչատնտեսական բազմաքանակ կադրերի ստեղծման մեծագույն ու դժվարին պրոբլեմը։

Լենինը ծաղրեց կապիտալիզմի սոցիալիստ լակեյներին, ցույց տվեց նրանց հերյուրանքների կատարյալ սնանկությունը։ Լենինը ապացուցեց, որ արտադրողական ուժերի զարգացման մակարդակը լիովին բավական է մեր երկրում հաղթական սոցիալիստական ռևոլյուցիա կատարելու համար։

«Սոցիալիզմ ստեղծելու համար,— ասում եք դուք,— գրել է Լենինը «Մեր ռևոլյուցիայի մասին» հոդվածում,— քաղաքակրթվածություն է պահանջվում։ Շա՜տ լավ։ Իսկ ինչո՞ւ մենք չէինք կարող, նախ, ստեղծել մեզ մոտ քաղաքակրթվածության այնպիսի նախադրյալներ, ինչպիսին է կալվածատերերի արտաքսումը և ռուսաստանյան կապիտալիստների արտաքսումը, իսկ հետո արդեն սկսել շարժումը դեպի սոցիալիզմ[1]»։

Պատմությունը հաստատեց Լենինի նշած ուղու ճշտությունը։ Սոցիալիստական ռևոլյուցիան գիտակցական ոգեշունչ ստեղծագործության բարձրացրեց տաղանդների և ընդունակությունների անսպառ աղբյուր հանդիսացող ժողովրդին, որը մասսայական հերոսության հրաշքներ ցուցաբերեց ինչպես սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման, այնպես էլ նոր կուլտուրայի շինարարության գործում։

Հենվելով սովետական իրավակարգի անվիճելի առավելությունների վրա, Կոմունիստական պարտիան կարճ ժամկետում լուծեց սոցիալիստական շինարարության ամենաբարդ և վճռական հարցերից մեկը՝ բազմակողմանի կրթված ու դաստիարակված մեծաքանակ կադրերի ստեղծումը։ Պարտիան և Սովետական կառավարությունը մշակեցին միջոցառումների մի հոյակապ սիստեմ, որի իրագործումն ապահովեց բանվոր դասակարգի և գյուղացիության լավագույն ներկայացուցիչների տեխնիկական ուսուցումը և առաջ քաշումը երկրի տնտեսական ու կուլտուրական շինարարության հրամանատարական պոստերում, հին ինտելիգենցիայի հիմնական մասի վերադաստիարակումը և անցումը Սովետական իշխանության կողմը։

Հանրահայտ է, որ նախասովետական Հայաստանը չուներ ոչ մի բարձրա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 570։

գույն ուսումնական հաստատություն։ Բարձրագույն դպրոցը Հայաստանում ծնունդ առավ Սովետական իշխանության հետ միասին։ Ներկայումս Հայկական ՍՍՌ-ում գործող Պետական համալսարանը, Պոլիտեխնիկ, Բժշկական, Գյուղատնտեսական, Անասնաբուծական — Անասնաբուժական, Մանկավարժական, Գեղարվեստական-թատերական, Ֆիզիկական կուլտուրայի և այլ ինստիտուտները, Կոնսերվատորիան Սովետական իշխանության ծնունդն են։

Երբ 1921 թ. հունվարին Երևանում հիմնադրվում էր Պետական համալսարանը, ոչ միայն մեր թշնամիները, այլև բարեկամներից ոմանք այն համարեցին շռայլություն, շքեղություն։ Նրանք բացեիբաց իրենց զարմանքն էին հայտնում այն առթիվ, որ տնտեսապես քայքայված, գաղթի ու քաղցի մատնված երկիրը լուսավորության գործի, բարձրագույն դպրոց հիմնելու վրա վիթխարի միջոցներ է ծախսում։ Սակայն եթե հայ ժողովուրդը թույլ տվեց նման «շքեղություն», եթե ռեսպուբլիկայի տնտեսական շինարարության սկիզբը զուգադիպեց համալսարանի հիմնադրմանը, դա բխում էր այն բանի պարզ գիտակցումից, որ երկրի գիտա-տեխնիկական միտքը պետք է սերտորեն կապվի տնտեսական շինարարության խնդրի հետ։ Հայ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս ժողովրդի եղբայրական օգնությամբ, ծանր պայմաններում ստեղծեց գիտության իր հոյակապ դարբնոցը՝ Պետական համալսարանը, որից, Ալ. Մյասնիկյանի պատկերավոր արտահայտությամբ. «կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի երկրի բոլոր ծայրերը»։ Համալսարանը դարձավ ռեսպուբլիկայի կուլտուրայի զարգացման սիրտը, ազգային կադրերի պատրաստման ու դաստիարակման կենտրոնը։

Նոր, պրոլետարական կադրերի, հատկապես տեխնիկական ինտելիգենցիայի կադրերի ստեղծման հարցը ավելի սուր ծառացավ երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման պարտիայի մշակած պլանի իրագործման ժամանակաշրջանում։ Նոր արդյունաբերական կենտրոնների երևան գալը, գյուղում խոշոր կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումը, նորագույն տեխնիկական բազայի վրա ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումը համոզիչ կերպով ցույց տվին, որ Սովետական պետությունը սոցիալիզմի հաղթական շինարարությունը չի կարող իրագործել եղած կադրերով։ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1928 թ. Հուլիսյան պլենումը արձանագրեց, որ «նոր մասնագետների պատրաստումը դառնում է ամբողջ պարտիայի կարևորագույն խնդիրը» («ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս 2-րդ, էջ 657)։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը հետագա տարիներին կայացրած բազմաթիվ որոշումներում (ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1929 թ. Նոյեմբերյան պլենումը, 1930 թ. սեպտեմբերի 6-ի, 1936 թ. հունիսի 23-ի և այլն) խնդիր դրին արագացնել սոցիալիստական արդյունաբերությունը տեխնիկապես ղեկավարելու ընդունակ նոր տեխնիկա-արտադրական ինտելիգենցիայի ստեղծման տեմպը։

Ղեկավարվելով կադրերի մասին պարտիայի Կենտկոմի և Սովետական կառավարության պատմական որոշումներով, և հաշվի առնելով ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի աճող պահանջմունքները, Հայաստանի պարտիական կազմակերպությունները հաջողությամբ լուծեցին ազգային կադրերի ստեղծման պրոբլեմը։ Հայկական ՍՍՌ-ում ստեղծվեց բուհերի և միջնակարգ մասնագիտական դպրոցների լայնածավալ ցանց, որը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերին տվեց տասնյակ հազարավոր

բարձրորակ մասնագետներ։ Բավական է ասել, որ Հայաստանի բուհերը Սովետական իշխանության 20 տարիներին (1921—1940) ժողովրդական տնտեսությանը տվեցին 7268 մասնագետներ, իսկ տեխնիկումները և մասնագիտական միջնակարգ դպրոցները 1920—1939 թթ. տվեցին 13300 մասնագետներ։ Այժմ Սովետական Հայաստանն ունի 12 բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ սովորում է ավելի քան 20 հազար ուսանող։ Ազգային հպարտության խոր զգացում է հարուցում այն փաստը, որ Հայաստանում բնակչության 1000 շնչին ընկնում է 45 անգամ ավելի սովորող, քան Իրանում, 11 անգամ ավելի, քան Թուրքիայում, 4 անգամ ավելի, քան Ֆրանսիայում։ 1913 թ. Հայաստանում կար 73 բժիշկ, 1146 ուսուցիչ. նախասովետական հայ գյուղը չուներ գյուղատնտեսական մասնագետներ։ Բերկրալի է իմանալ, որ 1957 թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին 6000 ինժեներ, 3500 գյուղատնտես, զոոտեխնիկ ու անասնաբույժ, ավելի քան 3700 բժիշկ, 18600 մանկավարժ, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մոտ 30 հազար զանազան մասնագետներ[1]։ Միայն Քաջարանում աշխատում են 105 ինժեներ, որ հինգ անգամ գերազանցում է նախառևոլյուցիոն ժամանակներում Անդրկովկասի լեռնային աշխատանքներում ընդգրկված ինժեներների թիվը։ Բերված փաստական ցուցանիշները Հայաստանում սեփական բանվորա-գյուղացիական ինտելիգենցիայի ստեղծման տիտանական քայլերի ուղենիշներն են։ Որակյալ կադրերի բազմահազարանոց բանակը, որն ընդունակ է ինքնուրույն կերպով լուծելու արտադրական, տեխնիկական ու գիտական բարդ հարցեր, հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է։

Նոր ինտելիգենցիայի ստեղծման ու աճեցման գործում արտահայտվեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մեծագույն ուժը, մեր երկրում կատարված կուլտուրական ռևոլյուցիայի կարևորագույն հետևանքներից մեկը։

Բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում մասնագետների կադրեր պատրաստելու հետ միասին պարտիան և կառավարությունը հսկայական աշխատանք են կատարում միլիոնավոր բանվորների և կոլտնտեսականների կուլտուր-տեխնիկական կրթական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ դասընթացների, արհեստագործական և երկաթուղային ուսումնարանների, ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցների և այլ հաստատությունների սիստեմի միջոցով։ Ինչպես Միության, այնպես էլ ռեսպուբլիկայի շատ գործարաններ և ֆաբրիկաներ հանդիսանում են յուրահատուկ ուսումնական կոմբինատներ, որտեղ հազարավոր բանվորներ և ծառայողներ առանց արտադրությունից կտրվելու ստանում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական տեխնիկական կրթություն, բարձրացնում են իրենց տեխնիկական մակարդակը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բացառիկ բարենպաստ ասպարեզ բացեց գիտության զարգացման, գիտա-հետազոտական հիմնարկությունների գործունեության և գիտա-տեխնիկական կադրերի աճեցման ու դաստիարակության համար։

Միայն սոցիալիստական՝ իրոք ազատ, արդարացի հասարակական կարգը և ժողովուրդների իրավահավասարության, եղբայրության ու բարեկամության

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 29 նոյեմբերի, 1957։

Լենինյան քաղաքականությունը պայմաններ ստեղծեցին բոլոր ազգային ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում, գիտական ու տեխնիկական մտքի հաջող զարգացման համար։ Գիտության զարգացումը պարտիայի ու կառավարության համար դարձավ կարևորագույն պետական գործ։

Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայում ստեղծվեցին մի քանի տասնյակ գիտական հիմնարկություններ, Գիտությունների ակադեմիա, բազմաթիվ բուհեր, որտեղ 1957 թ. հունվարին աշխատում էին 2616 գիտական և գիտամանկավարժական կադրեր, որից 143-ը դոկտորներ, 1284-ը գիտությունների թեկնածուներ։

Գիտությունների ակադեմիան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ միասին ստեղծագործական վիթխարի աշխատանք է կատարում սոցիալիստական շինարարության պրակտիկայի կողմից առաջադրվող պրոբլեմները, ամենաբարդ գիտա-տեխնիկական խնդիրները լուծելու ուղղությամբ։ Ռեսպուբլիկայում լայն զարգացում են ստացել ժամանակակից գիտության այնպիսի կարևորագույն ճյուղեր, ինչպես՝ ֆիզիկան, բարձրագույն մաթեմատիկան, աստրոֆիզիկան, քիմիան, ագրոքիմիան, պատմությունը, լեզվաբանությունը և այլն։

* * *

Կոմունիստական պարտիան կազմակերպեց մեր մեծ երկրի աշխատավորների ինքնակրթության, նրանց կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման ու ստեղծագործական ընդունակությունների զարգացման պետական լայն օգնություն, ստեղծելով կուլտուր-լուսավորական հիմնարկությունների խիստ ծավալուն ցանց։ Սովետական Միությունը, այդ թվում և Հայաստանը, ծածկվել է թատրոնների, ակումբների, գրադարանների, կինոթատրոնների, լեկտորիումների, կուլտուրայի տների և պալատների օջախներով, որոնց պահպանման, ընդարձակման ու գործունեության համար ամեն տարի պետական բյուջեից մի քանի միլիարդ ռուբլի է ծախսվում։ Կուլտուր-լուսավորական աշխատանքները ՍՍՌՄ-ում կատարվում են վիթխարի մասշտաբներով։ Մեր երկրի կուլտուր-լուսավորական հիմնարկությունների ցանցը ամենալայնն է աշխարհում։ Եթե 1913 թ. ամբողջ Հայաստանում գործում էին 13 գրադարան, 6 կինոկետ, ապա 1956 թ. գործում էր 1662 գրադարան, 1175 ակումբ, 20 թանգարան, 10 թատրոն, 378 կինոկետ, 52 կուլտուրայի տուն, հեռուստատեսային կայան և այլն։

Հայ ժողովրդի հոգևոր կուլտուրայի զարգացման և վերելքի վառ ցուցանիշներից մեկը մայրենի լեզվով մամուլի և գրքահրատարակչական գործի վիթխարի աճն է։

Պարտիան բացառիկ ուշադրություն է նվիրում պարբերական մամուլի, գրքերի հրատարակման գործին։ Հայերեն լեզվով հրատարակվող գրքերի ընդհանուր տիրաժը հասնում է մի քանի միլիոն օրինակի։ Եթե 1913 թ. Հայաստանում տպագրվել է 55 անուն գիրք, 80 հազար օրինակ տիրաժով, դաշնակների տխրահռչակ տիրապետության վերջին տարում՝ 1920 թ. 22 անուն գիրք և բրոշյուր, ապա միայն 1956 թ. հրատարակվել է 970 անուն գիրք՝ 6,4 միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով։ 1921 թ. մինչև 1957 թ. առաջին կիսամյակը Սովետական Հայաստանում լույս է տեսել 19711 անուն գիրք և բրոշյուր՝ 109 միլիոն 408 հազար օրինակ ընդհանուր տիրաժով։

Հայերեն լեզվով տպագրվող թերթերից ու գրքերից բացի, թերթեր ու գրքեր լույս են տեսնում նաև ռուսերեն, ադրբեջաներեն և քրդերեն լեզուներով։ Ներկայումս ռեսպուբլիկայում հրատարակվում են ավելի քան 84 անուն թերթ և 52 անուն հանդես։

Գրքերը, թերթերը, ամսագրերը ամուր ու խոր կերպով մտել են սովետական մարդկանց կենցաղի մեջ և հանդիսանում են նրանց հոգևոր կյանքի անկապտելի մասը։ Անգամ արտասահմանյան շատ հետազոտողներ, գործիչներ, որոնք թշնամաբար են տրամադրված դեպի սոցիալիզմը, ստիպված խոստովանում են, որ սովետական ժողովուրդը «դարձել է անկշտում ընթերցողների ազգ» և իրենից ներկայացնում է մասսայական կուլտուրական այնպիսի աուգիտորիա, որպիսին դեռևս չի իմացել պատմությունը։

Հայ ժողովուրդը ստեղծել է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական իր գրականությունը և արվեստը։ Սովետական արվեստագետները զինված պարտիայի ու կառավարության որոշումներով ավելի վարպետորեն են կիրառում սոցիալիստական ռեալիզմի հիմնական սկզբունքները։

Սովետական Հայաստանի, ինչպես և Սովետական երկրի մեծագույն նվաճումներից մեկը նոր մարդու ծնունդն է, որն աճեց ու ձևավորվեց սովետական հասարակարգի պայմաններում, կոմունիզմի գործի համար մղվող պատմական պայքարի պրոցեսում։ Նոր, սովետական մարդիկ մարդկության ազատության ու երջանկության մարտիկներ են, որոնք մարմնավորում են հոգևոր բարձր հատկություններ և բարոյական կերպարի վեհ գծեր։ Այսօրվա հայը, լինի նա բանվոր, կոլտնտեսական թե ինտելիգենտ բարձր գաղափարականության ու առաջավոր կուլտուրայի տեր մարդ է, մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ գաղափարներով օժտված, կոմունիզմի ակտիվ կառուցող։

ՍՍՌՄ-ում կատարված կուլտուրական ռևոլյուցիայի հաջողության արմատական պայմանը ժողովրդական լայն զանգվածների կենդանի, ստեղծագործական մասնակցությունն էր այդ ռևոլյուցիային։ Իրագործելով կուլտուրական շինարարության բնագավառում իր ծրագրային միջոցառումները, պարտիան հաստատակամորեն հենվեց մասսաների ստեղծագործական վերելքի վրա։

ՍՍՌՄ-ում կատարված կուլտուրական ռևոլյուցիայի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա ընթացավ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման նշանաբանով։

Սոցիալիստական կուլտուրան հենվում է արտադրության միասնական սոցիալիստական եղանակի վրա և ենթարկվում է ընդհանուր ու միասնական նպատակի՝ կոմունիստական հասարակության կառուցմանը։ Սակայն սոցիալիստական կուլտուրան ապազգային չէ։ ՍՍՌՄ ժողովուրդների կուլտուրան ձևավորվել է որպես ձևով ազգային, բազմազգ կուլտուրա։ Այդ կուլտուրան կոչվում է ազգային այն պատճառով, որովհետև հենվում է տվյալ ժողովրդի տնտեսական կյանքի, բարքերի, կենցաղի, սովորությունների և ազգային այլ առանձնահատկությունների հաշվառման վրա, և որ կարևորն է արտահայտվում է տվյալ ազգության լեզվով։

Ր. Վ. Ստալինը ցույց է տվել սովետական սոցիալիստական կուլտուրայի զարգացման մեջ ինտերնացիոնալ և ազգային շահերի միասնությունը։ «Պրոլետարական կուլտուրան,— ասել է Ստալինը,— չի վերացնում ազգային կուլտուրան, այլ բովանդակություն է տալիս նրան։ Եվ ընդհակառակը, ազգային կուլտուրան չի վերացնում պրոլետարական կուլտուրան, այլ ձև է տալիս նրան»։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 40-ամյա պատմությունը ապացուցում է, որ սոցիալիստական հասարակության պայմաններում տնտեսական ու կուլտուրական տեսակետից առաջավոր ազգերը չեն քայքայում թույլ, հետամնաց ժողովուրդներին, այլ ընդհակառակը, ամեն կերպ օգնում են նրանց զարգացնելու ազգային էկոնոմիկան ու կուլտուրան։ Զարգացնելով ազգային կուլտուրայի տրադիցիաները, յուրաքանչյուր ժողովուրդ իր ավանդն է մտցնում սոցիալիստական կուլտուրայի զարգացման մեջ։ Սովետական բազմազգ կուլտուրան սնվում է մեր երկրի բոլոր ժողովուրդների, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի ստեղծագործության հարուստ ակունքներից։ Հենց այդ էլ մեր կուլտուրային, արվեստին ու գրականությանը տալիս է կենարար ուժ։

Սովետահայ կուլտուրան յուրացնում է մարդկության նախորդ էտապներում ստեղծված գիտելիքների պաշարը, զարգացնում է անցյալի հայ կուլտուրայի լավագույն տրադիցիաները, արտասահմանյան ժամանակակից գիտատեխնիկական մտքի ու կուլտուրայի լավագույն նվաճումները և ծառայեցնում դրանք Հայրենիքի բարօրությանը, կոմունիստական շինարարությանը։

1956 թ. Մոսկվայում կայացավ Հայկական արվեստի և գրականության տասնօրյակը, որը վերածնված հայ ժողովրդի կուլտուրայի հիասքանչ տոնստուգատեսն էր։ Նա վառ կերպով ցուցադրեց Սովետական Հայաստանի կուլտուրայի զարգացման հաջողությունները, որոնք ձեռք են բերվել ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում։ Բարձր կուլտուրա, պրոֆեսիոնալ վարպետություն, կենսուրախ ստեղծագործություն, հիասքանչ ու սրտաբուխ արվեստ՝ ահա այն գնահատականը, որին արժանացավ տաղանդներով հարուստ հայ ժողովրդի արվեստն ու գրականությունը։

Հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին այժմ ապրում է իր կուլտուրայի իսկական վերածնության դարաշրջանը։